ՏԻԳՐԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԵՂԵՔՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ 1915-1916 ԹԹ.

Հայ պարբերական մամուլում արևմտահայության զորակոչի, նյութական կեղեքումների, բանակում հայ զինվորների զինաթափման, առանձին զորամիավորումներում կենտրոնացնելու և, վերջապես, սպանդի վերաբերյալ հրապարակված նյութերի մեծ մասը տպված է արևելահայ մամուլի օրգաններում: Դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով. նախ՝ Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցող ռազմական գործողությունների, ինչպես նաև Թուրքիայում դժոխային և անտանելի պայմանների հետևանքով տեղի էր ունենում արևմտահայ գաղթականության հոսք դեպի Կովկաս: Հասնելով Կովկաս արևմտահայ գաղթականները իրենց հետ բերում էին նաև տեղեկություններ Թուրքիայում տեղի ունեցած և տեղի ունեցող սոսկալի իրադարձությունների մասին: Առաջին աշխարհամարտի սկսվելուց անմիջապես հետո թուրքական իշխանությունները ամեն կերպ խոչընդոտում էին Թուրքիայից որևէ լուրի դուրս թափանցմանը: Թուրքական իշխանություններ նաև արգելք էին դրել երկրից քաղաքացիների, հատկապես հայերի ելքի վրա, իսկ դիվանագիտական տեղեկատվությունը պահվում էր գաղտնի և հասանելի էր միայն սահմանափակ թվով մարդկանց: Փաստորեն, Թուրքիայի հայության դրության և տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության հիմնական մասը ստացվում էր գաղթականների միջոցով: Մյուս հանգամանքը կայանում է նրանում, որ հայության արևելյան հատվածը գտնվում էր Կովկասյան ռազմաճակատի հարևանությամբ և առավել ազդեցիկ պարբերականների խմբագրություններին հաջողվում էր ժամանակ առ ժամանակ թղթակիցներ ուղարկել Արևմտյան Հայաստան, ռուսական զորքերի կողմց գրավված տարածքներ և այնտեղից ստանալ արժեքավոր և հավաստի տեղեկություններ:

1915-1916թթ. հայ պարբերականներում հարտարակված ականատեսների վկայությունների, թղթակիցների հոդվածների ուսումնասիրությունը գալիս է մեկ անգամ ևս ապացուցելու, որ համաշխարհային պատերազմի պայթելուց

անմիջապես հետո Թուրքիայի ողջ տարածքում սկսվեցին հայության զորակոչ, նյութական կեղեքումներ, բանակում հայ զինվորների զինաթափում, առանձին զորամիավորումներում կենտրոնացում և ոչնչացում: Դա երիտթուրքական իշխանությունների վաղօրոք որոշած, ծրագրավորած և մանրակրկիտ մշակված ու ենթականերին հրահանգված հայության ցեղասպանության քաղաքականության փուլերից մեկն էր:

Այդ քաղաքականության առաջին քայլը հայության ռազմունակ, իրական ուժ ներկայացնող հատվածի՝ արական սեռի ներկայացուցիչների բանակ զորակոչելու պատրվակով իրենց բնակավայրերից հեռացումը, ֆիզիկապես հյուծումը և, վերջապես, ոչնչացումն էր, որպեսզի բացառվեր հետագա ցեղասպան գործունեության ընթացքում որևէ պաշտպանություն և դիմադրություն:

1914թ. հունիսի 28-ին ավստրիական գահաժառանգի՝ Ֆրանց Ֆերդինանտի և նրա կնոջ սպանությունը հարմար ու ցանկալի առիթ հանդիսացավ մեծ տերությունների համար սանձազերծելու արդեն անխուսափելի համաշխարհային պատերազմը: Ավստրո-Հունգարիայի կողմից Սերբիային 1914 թ. հուլիսի 28-ին հայտարարված պատերազմով սկսվեց առաջին համաշխարհային պատերազմի մեծ սպանդը, որի մեջ աստիճանաբար ներգրավվեց թվով 28 երկիր[1]: 1914թ. հուլիսի 27-ին Թուրքիան Գերմանիային առաջարկեց պաշտպանողական և հարձակողական գաղտնի դաշինք, որը գերմանացիները անմիջապես ընդունեցին և օգոստոսի 2-ին ստորագրվեց դաշնագիրը[2]: Թուրքիան սկսեց պատերազմական նախապատրաստությունները՝ միաժամանակ օգոստոսի 3-ին հայտարարելով պատերազմում իր չեզոքության մասին[3]:

1914թ. օգոստոսի 2-ին (հուլիսի 21-ին) թուրքական կառավարությունը հայտա-ռարում է իրադեի-ուրֆի (պատերազմական դրություն) և սեվերբերլիք (ընդհանուր զորակոչ)[4]: Ամբողջ Թուրքիայի տարածքում սկսվում է 20-45 տարեկան արական սեռի ներկայացուցիչների զորակոչը թուրքական բանակ[5]:

---

[1] Եսայան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Ե., 1965, էջ26.

[2] Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ (ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Ե., 1997, էջ 79.

[3] Եսայան Ա.,նշվ. աշխ., էջ 28:

[4] «Մշակ», Թիֆլիս, 9 ապրիլի 1915թ., N 72:

[5] «Հորիզոն», Թիֆլիս, 21 մայիսի 1915թ., N 110:

Հայտնի է, որ սուլթանական Թուրքիայի նախկին օրենքներով քրիստոնյաները. այդ թվում նաև հայերը չէին զորակոչվում բանակ, բայց դրա փոխարեն տալիս էին հատուկ զինվորական հարկ (bedel-i askeri):[6] Ըստ 1879 թ. հունվարի 9-ի (27 սաֆեր 1297) «Ոչ-մահմեդական հպատակներից զինվորական հարկ գանձելու մասին» Մեծ վեզիրի գրության, ուղղված Թուրքիայի արդարադատության և ֆինանսների նախարարություններին «Մահմեդականները զինապարտ են համարվում 20-ից մինչև 40 տարեկան, իսկ 20-ից մինչև 40 տարեկան ոչ-մահմեդականները զինվորական ծառայության փոխարեն հարկատու են լինելու 5 հազար ղուրուշով, որը բաժանվելու և գանձվելու է 180-ից մեկը հաշվարկով: Հարկը գանձվելու է բոլոր ոչ-մահմեդական հպատակներից, բացառությամբ հոգևորականներից, հիմանդվերից, աղքատներից: Ոչ-մահմեդականներից այս գումարի գանձումը կատարվելու է պետական հարկահավաքի կողմից»:[7] Դա այնքան էլ ծեռնտու չէր երիտթուրքերին, և նրանք 1908 թ. հեղաշրջումից հետո որոշեցին հրատարակել ավելի ճկուն օրենք, որով, իբր «հավասարության» նշան, հայերը ևս ենթակա էին զորակոչի: 1909թ. հունիսի 6-ի (20 ռեջեբ 1327) «Ոչ-մահմեդական զինակոչիկների վիճակահանության վերաբերյալ կանոնի փոփոխության մասին» օրենքով օսմանյան ոչ-մահմեդական հպատակներից գանձվող զինվորական հարկը 1325 (1908) թ. վերացվել է: Այսուհանդերձ, ոչ-մահմեդականներից և Կ. Պոլսում, Բիլադի Սալիսայում[8] և այլ տեղերում մինչև օրս գրանցված զինվորական ծառայության տարիքի անձանց վիճակահանությունը (այսինքն 20-ից մինչև 40) կատարվելու է 1325 (1908)թ. մինչև օրս գործածության մեջ գտնվող կանոնի հիման վրա:

Զինվորական ծառայությունից ազատվելու են՝ պաշտոնանկ եղած և պաշտոնում գտնվող պատրիարքները, կաթողիկոսները, խախամբաշին, մետրոպոլիտը, եպիսկոպոսները, արխիմնադրիտը, վարդապետները, գլխավոր խախամները, վանքերի ղումինուսները, վանահայրերը, կրոնական ծառայության մեջ գտնվող քահանաները, դիակոսները, խախամները, վանքերում ծառայություն կատարող հոգևորականները: Բացառություն են կազմում նաև կրոնական և խախամական դպրոցների աշակերտները, վանքերում կրոնական

---

[6] Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 312:

[7] Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999, էջ 234-236:

[8] Կ. Պոլսի երեք թաղամասերի՝ Էյուպի, Գալաթայի և Ուսկյուտարի միատեղ անվանումը:

դասավանդությամբ զբաղվողները, ինչպես նաև բարձրագույն դպրոցների աշակերտները, գյուղերի և կասաբաների տարրական դպրոցների առաջին, երկրորդ և երրորդ կարգի ուսուցիչները»:[9]

Սկզբում կարծես թե ամեն ինչ բնականոն ճանապարհով էր գնում: Ոչ մի կըտրուկ տարբերություն չէր դրվում թուրքական բանակ զորակոչվող տարբեր ազգությունների, այդ թվում նաև հայերի նկատմամբ: Հայերը մահմեդականների հետ զենքով զինավարժություններ էին անում:[10] Ինչպես գրում է Թեոդիկը իր *«Ամենուն տարեցոյցը»*-ում «Տաճկահայը, որ Սահմանադրության հռչակմամբ՝ քաղաքացիական իրավունքի տիրացավ, իր երիտասարդ ուժերը տրամադրում էր Հայրենիքին (Օսմանյան կայսրությանը-Տ.Ս.)՝ իբրև զինվոր և մարզված կտրիճ հայորդիներ՝ ընդհանուր զորակոչին վրա՝ խառնվեցին բանակի շարքերում»:[11] Չնայած այն հանգամանքին, որ հայության զորակոչ թուրքական բանակ իրականացվում էր բազմաթիվ անարդարություններին զուգահեռ և հայ ազգաբնակչությունը, ընդհանուր առմամբ դժգոհ էր կառավարության հայտարարած զորակոչից և սպասվելիք պատերազմից, այնուամենայնիվ լուրջ ընդդիմություն, առավել ևս ըմբոստություն հայության կողմից չէր նկատվում: Ավելին, Հայոց պատրիարք Զավեն Արքեպիսկոպոսը հանդես եկավ շրջաբերականով՝ ուղղված Թուրքիայի հայերին, որում կոչ արեց մեր ազգի ներկայացուցիչներին «իբրև Օսմանցի, չթերանալ իր պարտականությունների մեջ՝ հանդեպ իր սիրելի հայրենիքին, և շարունակել դարեր ի վեր առ Օսմանյան Գահն ունեցած հավատարմությունը»:[12] Սակայն աստիճանաբար թուրքական իշխանությունները սկսեցին ամեն տեսակ անօրինականություններ և կամայականություններ հայ զորակոչիկների նկատմամբ: Օրենքով զորահավաքի ենթակա էին 20-40 տարեկան առողջ տղամարդիկ, սակայն հայերից թուրքական իշխանությունները խաբելով նախօրոք վերցնում էին զինվորական հարկ (միջին հաշվով 50 թուրքական ոսկի[13])՝ իբր թե բանակից ազատվելու համար, իսկ հետո բռնությամբ բոլորին հավաքում, խուսափողների՝ գնդակահարում: Դասալիքներ որոնելու անվան տակ նրանք կազմակերպում

---

[9] Փափազյան Ա.,նշվ. աշխ., էջ 236-237:
[10] «Հորիզոն», Թիֆլիս, 15 մայիսի 1915թ. , N 105:
[11] «Ամենուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1915թ., էջ 6:
[12] Նույն տեղում, էջ 6:
[13] Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 313:

էին շուրջկալներ, խուզարկություններ, և դաժանորեն կողոպտում ու գանակոծում մարդկանց, ծերբակալում ու սպանում նրանց:

Ընդհանուր առմամբ պատերազմի սկզբում զենքի տակ կանչվեցին 18-ից մինչև 45 տարեկան 50 հազար հայ զինվոր:[14] Թուրքական բանակ զորակոչված հայ երիտասարդները ստանում էին *վեսիկա* (վկայագիր), որը փաստորեն նշանակում էր քայլել «մահվան ճամփով»:

Զորահավաքի սկզբից թուրքերը հայերի համար ստեղծեցին ծանր կացություն, նրանց կյանքն անտանելի դարձնելով ամեն տեսակ կեղեքումներով ու գազանային վերաբերմունքով: Նրանք Շապին-Գարահիսարի, Բրթլիսի, Մուշի և այլ վայրերի հայկական բնակչությանը, ներառյալ կանանց ու երեխաներին ստիպում էին մեջքով, ռուսական սահմանի վրա կենտրոնացած թուրքական բանակի համար պաշար, ռազմամթերք տեղափոխել:[15]

Պատերազմի առաջին օրերից թուրքական իշխանությունները արհեստականորեն քաղաքական սուր հարցի վերածեցին թուրքական բանակից հայ զինվորների դասալքության հարցը՝ այն ծառայեցնելով իր քաղաքական և քարոզչական նպատակներին: Որքան թուրքական իշխանությունները ներողամիտ դիրք էին բռնում բանակից խուսափող թուրք երիտասարդության նկատմամբ, այնքան խիստ էին վարվում հայերի հետ, չնչին առիթներով նրանց մեղադրում դավաճանության, դասալքության մեջ և կախաղան բարձրացնում:[16]

Զորակոչին զուգահեռ մեծ չափերի հասան հայ ազգաբնակչության նյութական կեղեքումները: Պատերազմական դրության և ընդհանուր զորակոչի հետ թուրքական կառավարությունը ընդունեց, այսպես կոչված «գրավմանց օրենք», որի հիման վրա և ստեղծված «Գրավմանց հանձնաժողովների» միջոցով սկսեց բնակչությունից պատերազմական կարիքների համար հավաքել սնունդ, հանդերձանք, դրամ, անասուններ և այլն: «Թեև «գրավմանց օրենքն» ընդհանուր օսմանցիներին էր վերաբերվում, թուրքերը և քրդերը զանազան ձևերով խուսափեցին այդ թալանից: Նրանցից շատերը դարձան միլլի (ազգային զինվոր), կէօնիւլլի (կամավոր), չեթա (հրոսակախմբի անդամ),

---

[14] Պալաքյան Գ. Ծ վարդապետ, Հայ գողգոթան (դրվագներ հայ մարտիրոսութենեն), Վիեննա, 1922,էջ 59:
[15] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., Ե., 1967, էջ 263:
[16] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227,ց. 1, գ. 420, թթ. 2-4:

թեքեալիֆի հարպիյե խատէմէճիսի (Գրավմանց հանձնաժողովի տրամադրության տակ ծառայող)»,-գրում է Ն. Մարտիրոսյանը «Ինքնապաշտպանական գործը և մարտական կռիվները Տարոնի մեջ» հոդվածաշարում:[17] Կարելի է ասել սկսվեց պետական, կառավարության կողմից պաշտոնապես իրականացվող և պատերազմական դրության կարիքների բավարարման պատրվակով քողարկվող, ազգաբնակչությանը նյութապես և տնտեսապես կեղեքելու մի գործընթաց: Քանի որ կառավարությունը չէր կարող հոգալ զորակոչի արդյունքում հավաքված այդ հսկա բազմության կարիքները, հրաման տվեց զինվորներին իրենց հետ բերել հինգ օրվա ուտելիք:[18] Կատարյալ աղետ էր պատերազմական տուրքը՝ թեքյալիֆի-հարպիեն, որին ժողովուրդն անվանեց թեքալիում (առավ-փախավություն): Պատերազմական տուրքը ժողովրդից գանձվում էր ամեն մեկի ունեցվածքի 1/10–ի չափով՝ միաժամանակ ուղեկցվելով զանազան կամայականություններով ու չարաշահումներով:[19] Ժողովրդի համար անտանելի էր հատկապես փոխադրական միջոցների՝ սայլերի, եզների, գոմեշների, ձիերի, ջորիների ու էշերի մոբիլիզացիան: Քանի որ դա էլ չէր հերքում, հայերին օգտագործում էին նաև որպես գրաստներ, բեռնակիր-շալակատարներ: Նրանց հարկադրում էին տարվա բոլոր եղանակներին, այդ թվում ձմռան բքերին, ամենատանջալի ձևերով իրենց մեջքերի վրա փոխադրել զանազան բեռներ ու ծանրություններ:[20] Այսպիսով, զորահանության առաջին երեք ամիսներին արևմտահայությունը ենթարկվեց նյութական և տնտեսական պաշտոնական ջարդի՝ «իր ամենաստոր, կոշտ ու կոպիտ զուլումի հազար ու մի ձևերով»:[21] Թուրքական կառավարությունը հավաքեց հայերի ունեցած բոլոր ապրանքները և ուտելիքը և իրացրեց, իսկ սրբատեղիներն ու բնակարանները հիվանդանոցներիի, զորանոցների ու ամբարների վերածեց:[22] Փաստորեն թուրքական իշխանությունները աստիճանաբար ավելի ու ավելի էին ուժեղացնում երկրի հայ ազգաբնակչության ֆիզիկական և նյութական կեղեքումները, նախ և առաջ նպատակ ունենալով թուլացնել և նվազագույն հասցնել ինչպես

---

[17] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 9 հոկտեմբերի 1916 թ., N 46:
[18] «Հորիզոն», Թիֆլիս, 22 մայիսի 1915թ. , N 111:
[19] Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 314:
[20] Նույն տեղում, էջ 315:
[21] «Հորզոն», Թիֆլիս, 22 մայիսի 1915թ. , N 111:
[22] Նույն տեղում:

հայության դիմադրողական ուժը, այնպես էլ հարստանալ և հոգալ պատերազմական ահռելի ծախսերը հայության ունեցվածքի հաշվին, այնուհետև իրենց կամայականություններով հրահրել հայությանը ըմբոստության և ապստամբության, որպեսզի դրանք օգտագործվեն որպես պատրվակ ապագայում իրենց մտահղացած ցեղասպան քաղաքականության իրականացման ժամանակ:

Զորահանության առաջին օրերից իսկ սկսվեց թուրքական մշտասովոր մեթոդը. «զինվորական, քաղաքական, ոստիկանական և փիլիսոփայական մեծ ու պզտիկ պաշտոնյաները կաշառքով, կողմնակցիական, խաթրի պաշտպանության հազար ու մեկ միջոցներով սկսեցին բաց թողնել զինվորացուներին»:[23]

Զորահավաքը ուղեկցվում էր նաև քրիստոնյա ազգբնակչության, հատկապես, հայերի մոտ եղած զենքի բռնագրավմամբ: Դեռևս 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքերը իրենք որոշ տեղեր զենք էին տվել նաև հայերին, որպեսզի վերջիններս պաշտպանեն «սահմանադրական կարգերն» ընդդեմ աբդուլհամիդականների:[24] Պատերազմական դրության պայմաններում հայերն այդ զենքերը կառավարության հրամանով վերադարձնում էին: Սակայն թուրքական իշխանությունները դրանով չբավարարվեցին: Զենք որոնելու պատրվակով թուրքական ոստիկանները մտնում էին հայերի տները, ամեն ինչ տակնուվրա անում, ցանկացածը կողոպտում և կազմակերպում զանազան պրովոկացիաներ (իրենց զենքը ցուցադրում էին որպես հայերից գրաված և այլն), որոնք ուղեկցվում էին ծերբակալություններով ու սպանություններով: Այդ կարգի հալածանքները այնքան սաստկացան, որ հայերը հարկադրված էին թուրքերից, քրդերից, չերքեզներից բարձր գներով զենք գնել ու հանձնել, որպեսզի թեթևացնեն իրենց դրությունը:[25] «Հայերը,- գրել է Զ. Բրայսը,- զենք կգնեն իսլամներեն, զանոնք հանձնելու թուրք իշխանության, որպեսզի իրենց ենթարկած անագորույն տանջանքներեն վայրկյան առաջ փրկվեին: Այս պարագան հաստատվում է բոլորովին անկախ և անաչառ բազմաթիվ ականատեսներու կողմե»:[26]

---

[23] Նույն տեղում:
[24] Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 313:
[25] Նույն տեղում:
[26] Հայկական ջարդերու փաստաթղթեր. աշխատասիրեց Վ. Միրագենց, Կ. Պոլիս, 1920, էջ 24:

Թուրքիայում հայության վիճակն օր օրի սաստկանում էր: «Տաճկաստանի մայրաքաղաքէն մինչև ներքին գավառները, մինչև ամենահետին գյուղը՝ չարագուշակ բուի մը պես մեկ բառ միայն կը սավառներ հորիզոնէ հորիզոն՝ «Ջորակոչ»»:[27]

Նախքան Թուրքիայի մուտքը պատերազմ այնտեղ իրականացվող զորակոչի մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Թիֆլիսի *«Վան-Տոսպ»* շաբաթաթերթում տպագրված Ա. Մկրտչյանի «Խնուսի գավառի կոտորածը» հոդվածը:[28]

Սակայն արևմտահայության ամենադժոխային պահերը դեռ առջևում էին: Թուրքիայում հայության դրությունը կտրուկ վատթարացավ և թուրքական իշխանությունները ավելի գործնականորեն լծվեցին հայության արմատական ոչնչացման քաղաքականության իրագործմանը Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու և առաջին պարտությունները կրելուց հետո:

1914թ. հոկտեմբերի 29-30-ին գերմանո-թուրքական նավատորմը հարձակում է գործում Ռուսաստանի սևծովյան նավահանգիստների վրա, որին ի պատասխան Ռուսաստանը նոյեմբերի 2-ին պատերազմ է հայտարարում Թուրքիային:[29] Նոյեմբերի 3-ին Թուրքիան հարաբերությունները խզում է դաշնակիցների հետ, իսկ նոյեմբերի 5-ին Անգլիան, այնուհետև նոյեմբերի 6-ին Ֆրանսիան պատերազմ են հայտարարում Թուրքիային:[30] Մինչ այդ Թուրքիան հռչակեց «սրբազան պատերազմ» (ջիհաթ), որը մահմեդական աշխարհին կոչ էր անում «վեր կենալ և հարձակվել,- կյանքով և ստացվածքով կրոնական պատերազմի մասնակցել», որպեսզի մահմեդականները ազատվեն «գերությունից և թշվառությունից»:[31] «Ջիհաթի հայտարարմանը զուգահեռ,-ինչպես վկայում է Վ. Օխիկյանը «*Հորիզոն*» թերթում հրապարակած «Բաղեշի ընդհանուր կոտորածը» հոդվածում,-թուրքական իշխանությունները ազատություն տվեցին նաև մահմեդական բոլոր աքսորված, փախստական, թուրք և քուրդ ոճրագործներին ու ավազակներին, որոնց կարգեց հրոսակային-ասպատակիչ խմբերի՝ չեթաների ղեկավարներ: Սրանք էլ հենց հանդիսացան գործիք

---

[27] «Ամենուն տարեցոյցը», Կ.Պոլիս, 1916-1920թթ., էջ 5:
[28] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 13 մարտի 1916թ., N 16:
[29] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱԱ, հ. VI, Ե., 1981, էջ 538:
[30] «Նոր սերունդին պատկերազարդ տարեցոյցը», Բոստոն, 1916 թ.,
[31] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 630, թթ. 9-10:

թուրքական կառավարության ձեռքին հայերին ճնշելու և իրենց դժոխային ծրագրերը իրագործելու համար»:[32]

Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերը պատերազմին մեջ մտնելուց հետո երկար ժամանակ չանցած մեկը մյուսի ետևից սկսեցին կրել ծանր պարտություններ (Քյոփրի-քյոյի և Սարիղամիշի ճակատամարտեր): Թուրքական իշխանությունները կրած պարտությունների ամբողջ զայրույթը ուղղեցին դեպի հայ ժողովուրդ և իրենց անհաջողությունների պատճառը համարեցին «ռուսասեր» և «դավաճան» հայերին: Այսպես Քյոփրի-քյոյի մոտ թուրքական բանակի պարտության ողջ մեղքը բարդվեց հայերի վրա և Եղան գյուղում դասալքության մեջ մեղադրվեցին ու գնդակահարվեցին 50 հայ զինվորներ:[33] Թուրքական պետական ողջ ապարատը հայերի դեմ սկսեց ապատեղեկատվության լայնածավալ մի միջոցառում, որը նպատակ ուներ նախ և առաջ քողարկել թուրքական իշխանությունների և բանակի անզորությունը և անպատրաստությունը պատերազմ վարելու մեջ, այնուհետև՝ գրգռել մահմեդական ազգաբնակչությանը հայության դեմ և, խաղալով նրանց կրոնական զգացմունքների վրա, օգտագործել նրանց ուժերը հայությանը ջարդելու գործում և, վերջապես, երկրում ստեղծել համապատասխան մթնոլորտ հայության ցեղասպանության քաղաքականության իրագործման համար: Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի անմիջական հովանավորությամբ թուրքերը սկսեցին զանազան ստահոդ լուրեր տարածել ընդդեմ հայերի:

Թուրքական իշխանությունների ակտիվորեն լծվում են բանակում հայ զինվորների զինաթափման, առանձին զորամիավորումներում կենտրոնացման և ոչնչացման գործին:[34] 1915 թ. փետրվարի 27-ին էնվերը ծածկագիր հեռագիր է ուղարկում զորամասերի հրամանատարներին. «Ներկա կացության բերմամբ, կայսերական հրամանով որոշված է հայ ցեղին ամբողջ փչացումը: Անոնց մասին հետևյալ գործողությունները պիտի ըլլան.

1. Մինչև հինգ տարեկան մանուկներեն զատ՝ օսմանյան հպատակ եղող և

---

[32] «Հորզոն», Թիֆլիս, 19 սեպտեմբերի 1915թ. , N 211:

[33] Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թթ., Երևան, 1917, էջ 101:

[34] Mandelctam A., Le sort de l' Empire Ottoman, Lausanne-Paris, 1917, p. 245.

երկրին մեջ հայ անունը կրող բոլոր պաշտպոգուքները (ոչ-զինվորական-ները)քաղքե դուրս հանվելով պիտի սպանվին:

2. Կայսերական բանակներու մեջ ծառայող բոլոր հայ անհատները առանց դեպքի մը տեղի տալու՝ իրենց զորաբաժիններեն զատելով ընդհանրապես աչքե հեռու ծածուկ վայրերու մեջ գնդակահար պիտի ըլլան:

3. Բանակի մեջ գործող հայ սպաներն ալ իրենց պատկանած զորախումբերու բանակատեղերուն մեջ պիտի բանտարկվին մինչև իրենց մասին նոր զեկուցում ըլլա:

Այս երեք տրամադրությունները յուրաքանչյուր բանակի հրամանատարության հաղորդված թվականեն 48 ժամ վերջ անոնց գործադրության մասին հատուկ զեկույց պիտի ըլլա»:[35]

1915թ. գարնանը թուրքական բանակի հայ զինվորականները զինաթափվեցին ու առանձնացվեցին բացառապես բանվորական, գործավորական գումարտակների մեջ (ամելե-թաբուրի, զրաաթ-թաբուրի): Այս մասին հետաքրքիր տեղեկություններ կան «*Հորիզոն*» թերթում Ա-Դոյի հրապարակած «Հայկական կատակոմբների» հոդվածում[36] և հայ զինվորների գնդակահարությունից հրաշքով փախած մի հայի թերթի խմբագրությանը տված վկայություններում[37]:

Թուրքական բանակ զորակոչված հայերից նրանք ովքեր տիրապետում էին որևէ արհեստի բաժանվում էին զանազան զինվորական արհեստանոցների մեջ, իսկ ովքեր արհեստի չէին տիրապետում զինում էին բահ ու բրիչով և տասնապետերի մտրակների հարվածների տակ հող էին փորում օրական 15 ժամից ավել: Սոսկալի ու տանջալի էր հայ զինվորների վիճակը: «Շան դրությունից էլ գեշ է հոս հայ զինվորի վիճակը. մուսուլմանները զինքը կը դիտեն կասկածով, դիմացն ալ ռուս զորքին մեջ հայերը լեցում են...հայը հայուն դեմ, կատարյալ ողբերգություն է»,-փերվարի 6-ին գրում է «Մարտիկ մը» ծածկանունով մի հայ Կ. Պոլսից[38]: Այս ամենը թուրքական կառավարությունը ամեն կերպ աշխատում էր քողարկել օտարների աչքից:[39]

---

[35] Անառոնյան Ա., Մեծ ոճիր, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Բոստոն, 1921, (գրքի լուսապատճենային հրատարակությունը՝ Ե., 1990):, էջ 232:

[36] «Հորզոն», Թիֆլիս, 15 մայիսի 1915թ. , N 105:

[37] Նույն տեղում, 24 մայիսի 1915թ. , N 113:

[38] Նույն տեղում, 25 փետրվարի 1915թ. , N 43:

[39] Նույն տեղում, 19 սեպտեմբերի 1915թ. , N 211:

Իհարկե այն անմարդկային պայմանները, որ ստեղծվել էր հայ զինվորականության համար չէր կարող չառաջացնել դասալքություն հայ զինվորների շարքերում, սակայն Թուրքիայի «գավառներից ամեն օր Կ. Պոլիս հասնող լուրերը պարզ ցույց էին տալիս, որ հայերը 3-4 անգամ ավելի նվազ էին խուսափում զինվորական ծառայությունից, քան քրդերն ու թուրքերը»:[40] Այնուհանդերձ, անտեսելով ծառայությունից խուսափող հայերի թվաքանակի անհամեմատ քչությունը ծառայությունից խուսափող թուրքերի և քրդերի համեմատ, թուրքական իշխանությունները յուրաքանչյուր պատեհ առիթ օգտագործում էին հայտնելու իրենց դժգոհությունը հայ զինվորներից: Արդեն 1915 թ. մարտի 15-ին հաղորդվում է, որ «զորքերում ծառայող բոլոր հայերը զինաթափված են»:[41] Այդ գործում նրանց աջակցում էին գերմանացիները, անձնապես մասնակցելով հայերի զինաթափմանը: Այսպես օրինակ, «երբ Էրզրումում անցկացվում էր զորահանդես, գերմանական սպաները հայերից վերցնում էին զենքը»:[42] Իսկ արդեն 1915թ. մայիսին թուրքական իշխանությունները գրեթե ամբողջովին իրականացրել էին հայոց ցեղասպանության առաջին փուլը, այն է՝ զորակոչել հայ արական սեռի դիմադրության ունակ հատվածին թուրքական բանակ, որոշ ժամանակ անց նրանց զինաթափել, աստիճանաբար կենտրոնացնել առանձին զորամիավորումներում և մաս-մաս զատելով իրարից ոչնչացնել հասարակության, առավել ևս օտարերկրացիների աչքից հեռու: «Այս ձևով ոչնչացրեց նամարդի թշնամին մեր մարտական ուժերը, որոնց թիվը հասնում էր 50-60 հազարի»:[43] Միայն շատ քչերին հաջողվեց կենդանի մնալ ճեղքելով ռազմաճակատի գիծը և հանձնվելով ռուսական զորքերին:

Այս ամենին զուգահեռ թուրքական իշխանություններին հաջողվեց նյութապես կեղեքել հայ ազգաբնակչությանը, ամենակոպիտ, դաժան և անմարդկային եղանակներով՝ տիրել նրա ահռելի գումարների հասնող ունեցվածքին:

---

[40] Նույն տեղում, 25 փետրվարի 1915թ. , N 43:

[41] Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 317:

[42] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Г. Нерсисяна, Е., 1966, стр. 386.

[43] Տերտերյան Ի., Հայկական գոյամարտը: Մեր ցեղի դառնաղետ անցյալի սեղմ պատմություն, Թեհրան, 1957, էջ 233: